ՀՀ Սյունիքի մարզի Արծվանիկի բազալտների հանքավայրի «Արևելյան» տեղամասում «Սիմոնա» ՍՊԸ կողմից նախատեսված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

28.09.2020թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք, Կապան համայնքի Արծվանիկ գյուղի վարչական ղեկավարի նստավայրում 2020 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ ՀՀ Սյունիքի մարզի Արծվանիկի բազալտների հանքավայրի «Արևելյան» տեղամասում «Սիմոնա» ՍՊԸ կողմից նախատեսված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Սիմոնա» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Արսեն Փիրյանը, «Ընդերք» ՍՊԸ տնօրեն՝ Ս. Գևորգյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Բացման խոսքով հանդես եկավ Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դ. Հայրապետյանը: Նա ողջունեց քննարկման մասնակիցներին, նշեց, որ հանրային քննարկումը նախատեսվել է իրականացնել Արծվանիկ գյուղում, որպեսզի Արծվանիկի բնակիչները հնարավորություն ունենան ցանկության դեպքում մասնակցել, հայտնել իրենց կարծիքները և տալ հարցադրումներ: Հայրապետյանը ներկայացրեց հանրային քննարկման վարողին՝ Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ա. Համբարձումյանին: Վերջինս ողջունեց ներկաներին, ընթերցեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 151 համարում, ինչպես նաև Կապանի

համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ընդերք» ՍՊԸ տնօրեն՝ Ս. Գևորգյանին: Նա նշեց, որ «Ընդերք» ՍՊ ընկերությունը մասնագիտացված ձեռնարկություն է և զբաղվում է երկրաբանահետախուզական ու հանքարդյունահանման նախագծերի կազմման աշխատանքներով: «Սիմոնա» ՍՊԸ հետ պայմանագրային հիմունքներով կատարում ենք երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծում, իսկ Ձեր թույլտվությունը ստանալուց հետո՝ կկատարվեն արդեն երկրաբանահետախուզական աշխատանքներ: Այս գործունեությունը անցնում է հանրային լսումների 2 փուլով: Այսօրվա հանրային քննարկումը կոչվում է 1-ին, նախնական համաձայնության փուլ: Համաձայնությունը ստանալուց հետո կկազմվի մանրամասն աշխատանքային ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, որն էլ համաձայնության հետ միասին կուղարկվի շրջակա միջավայրի նախարարություն փորձաքննության նպատակով: Հայտը կանցնի 15 մարմիններով և 3-4 ամիս անց՝ համապատասխան դիտողություններով, ուղղումներով, շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչը արդեն իսկ լրամշակված հայտը կբերի քննարկման: Այսօրվա նախնական տվյալներով՝ ուսումնասիրությունը կկատարվի 5 հա տարածքի վրա, որը գտնվում է Վարդավանք բնակավայրի վերևի հատվածում, որտեղ կան մերկացումներ, բազալտի բացվածքներ: Կհորատվի 3, 4 հորատանցք և կթույլատրվի 150-300 մ^3 փորձնական հանույթ: Աշխատանքները կատարվելու են գյուղից 1,5 կմ հեռավորության վրա, իրականացվելու է խոնավ հորատում: Փորձնական հանույթը կտևի 2-3 ամիս, իսկ փաստաթղթային ձևակերպումները՝ 6 ամիս: Ուսումնասիրության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարելի է ասել զրոյական է: Տարածքները չեն խախտվի, ճանապարհներ չեն կառուցվի: Մշակվելիք նախնական գնահատման հայտում կտրվեն բոլոր սպասվելիք ազդեցությունները՝ հաշվարկներով, թե ինչքան արտանետումներ կլինեն, ինչքան փոշի կբարձրանա այդ աշխատանքների արդյունքում և կտրվեն դրանց մեղմացմանն ուղղված միջոցառումները: Այս փուլում կարելի է ասել, որ ազդեցությունը կլինի շատ ցածր: Երկրորդ լսումների ժամանակ արդեն ամբողջ մշակված փաթեթը շրջակա միջավայրի նախարարության փորձագետների հետ կբերվի և կներկայացվի հանրային քննարկման:

Հարց (Անուշավան Հարությունյան-Արծվվանիկ բնակավայրի վարչական ղեկավար)

Վարդավանքից ի՞նչքան է բարձր տարածքը, ո՞րտեղ է այն գտնվում:

Պատասխան (Սահարոն Գևորգյան)

Գտնվում է շլաքի հանքից 800մ ներքև: Չենք եղել այդ տարածքում, միայն համաձայնությունը ստանալուց հետո մասնագետները կմտնեն տարածք, կկատարվի գեոդեզական հանույթ և կուսումնասիրվի երկրաբանների կողմից:

Հարց (Անուշավան Հարությունյան)

Այնտեղ կան նաև վարելահողեր, այնտեղից քար հանելու եք:

Պատասխան (Սահարոն Գևորգյան)

Հետագայում թույլտվությունը ստանալուց հետո կկազմվի շահագործման նախագիծ, կլինի 4 քննարում, կտևի մոտ 2-3 տարի: Մինչ քար հանելը դեռ հինգ անգամ հանդիպելու ենք Ձեզ և քննարկենք:

Լրացում (Դավիթ Հայրապետյան)

Այս փուլում նախնական ուսումնասիրություն է իրականացվելու, շահագործման մասին դեռ շուտ է խոսելը:

Լրացում (Սահարոն Գևորգյան)

Հնարավոր է, որ ուսումնասիրության արդյունքում ոչինչ էլ չհայտնաբերվի և շահագործում էլ չարվի: Եթե ունեք բողոքներ, առաջարկներ՝ կարող եք ասել, հաշվի կառնվեն:

Հարց (Արկադյա Օհանյան-Արծվանիկի բնակիչ)

Քարերի պայթեցման աշխատանքներ կատարվելու են:

Պատասխան (Սահարոն Գևորգյան)

Ոչ, պայթեցման աշխատանքներ չեն արվելու, քանզի արդյունքում քարն է փչանալու: Ավելի շատ աշխատում են էքսկավատորներով, նախկին պայթեցումները չկան:

Ամփոփում (Ավետիք Համբարձումյան)

Շնորհակալություն բոլորին մասնակցության համար: Հանրային քննարկումն ավարտվեց:

Կապան համայնքի ղեկավար — **Գևորգ Փարսյան**

«Սիմոնա» ՍՊԸ տնօրեն — **Անի Սիմոնյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գյուղ.
և հողօգտագործման բաժնի պետ — **Ավետիք Համբարձումյան**

Արձանագրող՝ Կապան համայնքի
ղեկավարի տեղակալ — **Դավիթ Հայրապետյան**